

**ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԸ
ՇՈՒԿԱՑԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ**

Գ. Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՑԱՆ

Խորհրդային տնտեսության ներկայիս ճգնաժամային իրավիճակի հաղթահարման և արտադրահարաբերությունների համակարգում արմատական փոփոխությունների իրականացման գիտականորեն հիմնավորված ծրագիր մշակելու կարևորագույն նախապայմաններն առաջիկա վերակառուցումների ակտիվության ու նպատակների խոր վերլուծությունն ու տեսական հիմնավորումն են:

Հասարակագետներից շատերն են գիտակցում ձեռնարկված բյուրոկրատական հարաբերությունների կաղնալուծման անընդանցելի հրամայականը: Այսօր ուսումնասիրությունների Շոուկայական ուղղությունն» ամենատարածվածն է տնտեսագետների շրջանում: Դրա կողմնակիցներին միավորում է խոր հավատը շուկայի հղորության նկատմամբ, որն ինքնակառավարման ու ինքնակարգավորման միջոցով կապահովի անհրաժեշտ մրցակցությունը հասարակության մեջ, կխթանի աշխատանքային ակտիվությունը, տեխնիկական առաջընթացը և ողջ տնտեսության վերելքը:

Այս հույսերն անհիմն չեն: Համաշխարհային քաղաքականության դարձափոխման ակնհայտորեն վկայում է, որ միայն նման մեխանիզմի առկայությունն է թույլ տալիս լուծել հասարակության առջև կանգնած կարևորագույն խնդիրը՝ մարդկանց ապրելու նորմալ կենսապայմաններ ապահովելը՝ կախված նրանց տնտեսական գործունեության արդյունավետությունից:

Սակայն շուկայական հարաբերությունների դարձացման անխուսափելիության ընդունումը գեո. գործի կեսն է: Պակաս կարևոր չէ այդ ճանապարհին արտադրահարաբերությունների համակարգի և հատկապես սեփականության հարաբերությունների համապատասխան փոփոխությունների անհրաժեշտության գիտակցումը և այդ գործընթացի ֆիշտ իրականացումը, Իսկ սեփականության ինստիտուտի վերահաստատումն իր հերթին հարցականի տակ է դնում տոտալիտար հասարակարգի հետագա գոյատևման խնդիրը, որով հարվածում է հասարակության որոշակի խավերի գիրքերին: Այդ պատճառով տնտեսագիտական հետադոտություններում արտացոլվում են ոչ միայն հասարակական բարեփոխումների անհրաժեշտության ըմբռնումը, այլ նաև սոցիալական տարրեր խմբերի շահերը: Մեր կարծիքով այդ հանգամանքներն են խորհրդային էկոնոմիկայի վերակառուցման և շուկայական հարաբերությունների անցման րազմադան ուղղությունների գոյության հիմնական պատճառը: Համառոտակի քննարկենք այդ տարրերակների տեսական նկատառումները և գործնականում դրանց իրականացման հնարավոր հետևանքները:

Առաջին ուղղության մեջ կարելի է խմբավորել այն տեսականները, որոնք բոլոր գնաքերում գեմ են արմատական որեէ փոփոխության և առաջարկում են տեղային բնույթի որոշ մակերեսային գեղատոմսեր՝ սոցիալիստական արտադրահարաբերությունների ըրջանակներում, այլ փոսքով, վարծում են, որ պետք է հավատարիմ մնալ սոցիալիստական լոնտրությանը: Այս ուղղության հետադոտություններում սովորաբար չի գիտարկվում սեփականության կատեգորիան, չնայած հատկապես վերջինս է որոշում սվյալ համակարգին պատկանող տնտեսական մեխանիզմը: Նկատի ունենք, ոչ թե տնտեսավարական ար-

տաքին ձևերը, այլ արտադրական հարաբերությունների հետ կապված առավել խոր գործընթացները: Այս առումով, թե՛ աշխատանքի վարձատրության հիմնական սկզբունքը, թե՛ այն ծնող սեփականության հարաբերություններն ուղադրության չեն արժանանում:

Մենք հարում ենք տրամագծորեն հակառեկ աեսակետին: Սակայն մինչ այն շարադրելը կարեոր է քննարկել նաև շուկայական հարաբերությունների անցման և ընդհանրապես տնտեսական րարեփոխումների իրազանացման միջին տարբերակը: Խոսքը, մասնավորապես, այն զուգակցումների մասին է, որ սոցիալիստական արտադրահարաբերությունների շրջանակներում փորձում է կատարել խորհրդային գիտնականների մեծամասնությունը: դիցուք՝ կենտրոնացված կարգով կառավարվող շուկայի ստեղծում, ապրանքադրամական հարաբերությունների գարգացում՝ անմիջական հասարակական կապերի առկայության պայմաններում և նման այլ հիփոթեզների մշակում, որոնք առաջին հայացքից շատ գրավիչ են՝ որպես փոխդիշոգական բնույթի միջոցառումներ: Սակայն տնտեսավարման գործունեության ռազմաթիվ փաստերն ու տեսական խոր վերլուծությունը փ հայտ են բերում այդպիսի լուծումների սեանկությունն ու անհեռանկար լինելը:

Այսպես, օրինակ, մարքսիստական տեսությունը մասնանշել է սոցիալիզմի ժամանակ ապրանքադրամական հարաբերությունների գերի աստիճանական նվազումը՝ արտադրողական ուժերի զարգացմանը զուգընթաց: Այս դրույթի ճշմարտացի կամ ասիալ լինելն առանձին հարց է: Ինչեիցե, դա զարգացման խիստ որոշակի ընթացք էր, որքան էլ որ անհիմն լիներ, ինչը մեր երկրում միառժամանակ այսպես թե այնպես պատկանվում էր: Քայլ առ քայլ տնտեսական գործունեությունից դուրս էին մղվում ապրանքային տնտեսությունը: Մյուս կողմից համակարգային կատեգորիաներ, ինչպիսիք են շուկան, մրցակցությունը, ազատ գնադրացումը, արտադրության միջոցների առևտուրը, արտադրողների կողմնորոշումը դեպի շահույթի սացցումը և այլն:

1965 թ. տնտեսական ռեֆորմը փորձ արեց մասնակիորեն վերակառնել շահույթի դերը սոցիալիստական էկոնոմիկայում՝ այն օժտելով գնահատման ու խթանիչ ֆունկցիաներով, որոնցից վերջինս զրկված էր: Մնթադրվում էր, որ եթե ձեռնարկությունները շահույթի մի մասը փոխանցեն նյութական խրախուսման ֆոնդին, ապա դա կլուծի աշխատանքի խթանման հարցը, կապահովի արտադրության ծախսերի նվազեցումը, կշահագորգոի աշխատողներին՝ ընդունելու լարված պլաններ և այլն:

Սակայն կատարվեց մեկ այլ բան: Տեղի ունեցավ շուկայական և առևտեսությունն ալանային վարման մեխանիզմների տարրերի բախում: Ձեռնարկությունները զարկ ալին ձեռնտու արտադրատեսակների թողարկմանը՝ ի հակադրություն հասարակական շահերի ու կենտրոնի կարգադրությունների: Ձեռնարկությունների և դրանց աշխատանքը պլանավորող կազմակերպությունների միջև կապերը թուլացան, իսկ դրանց հարաբերություններում ստեղծվեց մշտական լարվածություն, որը ժամանակ առ ժամանակ փոխակերպվում էր կոնֆլիկտի: էկոնոմիկան գտրձտվ առավել դժվար պառավարելի: Արադացավ դրա կազմալուծման գործընթացը, ձեռնարկության տնտեսավարման ծախսումային մեխանիզմը: Այս ամենն ի վերջո արտահայտվեց դիտատեխնիկական առաջընթացի կասեցման, պլանավորման վատթարացման, հասարակական աշխատանքի հաշվառման ձեախախտման, վարչարարության ծաղկման և այլ մնասակար հետևանքներում:

Նույնիսկ սակավաթիվ փաստերի վկայակոչումը կարող է հավաստել այդ: Օրինակ, շահույթի ցուցանիշը 8-րդ հնգամյակում երկրում աճեց՝ կրկնակի անգամ (1965—1980 թթ.՝ չորս անգամ), իսկ աշխատանքի արաադրողականության աճը նույնիսկ գրամական արդյունքի հիման վրա պատարվող ոչ ձիշա չափման պայմաններում ձաղմեց ընդամենը 39 %¹: 1970-ական թվա-

¹ Народное хозяйство СССР в 1980 г., М. 1981, с. 40.

կաննների վերջին աշխատանքի արաադրողականության աճի տեմպերն աթ-դյունաբերության մեջ 1950—1960-ական թվականների համեմատությամբ նվազեցին երկու անգամ: Նման անցանկալի երևույթները շուկայական մեխանիզմի և պլանային էկոնոմիկայի՝ միմյանց նկատմամբ «օտար» մոթ-միների համատեղության հեռանք էին:

Վերոհիշյալ օրինակը կարելի է համարել հակադրությունների գիտակցական միացում՝ կողմնաժ մեթոդաբանական սկզբունքի իրականացման փորձերից մեկը դործնականում: Այդ աեսական դրույթի ծնունդը մենք սերաորեն կապում ենք խորհրդային հասարակարգի՝ պաամական բնականոն դարգացումից շեղված լինելու իրողության հետ: Պատահական չէ. որ առաջին անգամ այս գաղափարն առաջ է քաշել Վ. Ի. Լենինը դեռևս խորհրդային իշխանության առաջին ասրիներին: Նա դտնում էր, որ սոցիալիզմի ժամանակ, ի տարբերություն հասարակական դարգացման նախընթաց փուլերի, հնարավոր է և անհրաժեշտ գիտակցաբար միացնել հակադրությունները: Պարզապես ՆեՊ-ին նախորդող ժամանակաշրջանում նա ճիշտ նույն կացության մեջ էր, ինչ մեր դիտնականներն այսօր, երր ողջ պարղությամբ տեսնում էր շուկայական տնեսսության վերադառնալու անխուսափելիությունը, սակայն, մյուս կողմից, դա նույնքան դժվար էր, որքան սեփական ձեռքով սոցիալիզմի վրա խաշ քաշելը: Արդյունքը ողապ հակադրությունների դիտակցական միացման մասին փոխդիզողական տարբերակի մշակումը:

Այս դրույթի հավատարմադրումը ներկայումս նույն տրամաբանությամբ արաացուում է այն իրողությունը, որ, մի կողմից, սոցիալական ոռոշ խավերի համար ցանկալի է, հետևաբար, ընդունելի չէ նահանջը սոցիալիզմի դիրքերից, սակայն, մյուս կողմից, դա թելադրում է պատմական դարգացման տրամաբանությամբ, որի առաջ ստիպված են աեղի ատլւ Լուծումը դտնվում է նմանօրինակ էկելտիկ համատեղությունների մեջ:

Հասարակական դարգացման ներկա ժամանակաշրջանը և տնեսսության ճգնաժամանակն իրավիճակի վերացման խնդիրների լիաատ սրվածությունը պահանջում են հակադրությունների դիտակցական միացման երեույթի ու հասկացության առավել խոր և հտմակողմանի մեկնաբանություն՝ դրա կիրառման նոր օրինակների բացառման նպատակով: Մեր կարծիքով այդ մեթոդը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեկ տմբողջի մեջ աարբեր էությունների միացման փորձ, որն ի վերջո դատապարտված է ձախողման, քանի որ երկու կողմերից ոչ մեկը, առանձին վեցրտծ, չի եկթադրում մյուսի դրույթները՝ չի դտնվում նրա հետ դիալեկտիկական միատնության մեջ: Նման վիճակը վերջին հաշվով ավարտվում է կողմերից մեկի հադթանակով:

Նեթե, օրինակ, շուկայական մեխանիզմի բյուրոկրատական սահմանափակումները հասնում են որոշ բեկումնային տատիճանի, ապա մնում է լոկ շուկայի դոյություն երևութականությունը, այսինքն հադթանակում է էություններից մեկը, տվյալ դեպքում՝ կենարոնացված կառավարման մեխանիզմը: Չեն բացառվում նաև շոսկայական ու բյուրոկրատական կարգավորումների այնպիսի համատեղությունները, որոնց ժամանակ միադումարվում են հասարակության համար դրանց անբարենպաստ հետևանքներ և չեղոքանում առավելությունները:

Շուկայական ու բյուրոկրատական հաաբերությունների դուալիզումները պարզապես տրաաավոր ջրջանակ չեն, ինչպես իրավացիորեն նշում է Յա. Կորնաին, այսաեղ աեղին է խոսել շուկայի բյուրոկրատական ոահամանափակումների «շրջապսուլախ» մասին²: Որքան ամեհ հաճախ են վերաոաս մարմինները միջամտում շուկայական հաաբերություններին, այնքան վերջիններս ավելի են տկարանում: Հետևանքը լինում է այն, որ փշխանություն-

² Янош. Корнаи, Бюрократия и рынок (Проблемы экономики, 1989, № 12, с. 74).

ներքն զգում են նոր և առավել ուժեղ միջամտության անհրաժեշտությունը, որը շարունակում է ջլատել շուկայի կենսական ուժերը: Իյուրոկրատական կառավարումը խորանում է, իսկ շուկան վերջին հաշվով վերանում է:

Սա չի նշանակում, թե մենք ընդհանրապես դեմ ենք շուկայական էկոնոմիկայի կարգավորմանը կամ տնտեսական կյանքում նման այլ մեխանիզմների գոյությանը, որոնք կարող են նպաստել հասարակական հսկասությունների լուծմանը և հիմնավորված տնտեսական քաղաքականություն վարելուն: Օրինակ, այնպիսի իրավիճակներում, երբ մոնոպոլիաները զուգընկերներին և սպառողներին թելադրում են իրենց պայմանները, աճում է դրանց գործունեության նկատմամբ վարչական հսկողության ուժեղացման անհրաժեշտությունը: Սակայն այս գեպքում տնտեսական համակարգի հիմքում ոչ մի օտարածին էություն չի պատվաստվում:

Մինչդեռ սեփականության հարաբերությունների սոցիալիստական փոփոխումը և արտադրության միջոցների նկատմամբ պետության մենաշնորհը լիբերի րացառում են տնտեսական սուբյեկտների ազատ հորիզոնական կապերի, այսինքն շուկայական էկոնոմիկայի զարգացումը: Դրանք, ընդհակառակը, ենթադրում են հասարակական-տնտեսական հարաբերությունների ուրիշ՝ կենտրոնացված կառավարման տրամաբանություն և երբեք չեն կարող հիմք ծառայել շուկայական մեխանիզմի դործունեության համար, վերջինիս հետ համատեղվել միասնական համակարգի մեջ:

Այսպիսով, փնչպես յոթ տասնամյակների ընթացքում չի հաջողվել ղուգակցել տնտեսության կենտրոնացված կառավարումն ու տնտեսական սուբյեկտների ինքնուրույնությունը, անմիջական հասարակական և ապրանքադրամական հարաբերությունները, հասարակական սեփականությունը և տրեստական խթանումը, չի հաջողվի նաև շուկայական հարաբերությունների անցնել անդեմ, անպատկան և մարզկանց նախաձեռնողական գործունեությունը կաղմալուծող սեփականության հիման վրա:

Շուկայական տնտեսական հարաբերություններին անցնելը, ընդհանուր առմամբ, հետապնդում է մեկ նպատակ՝ տնտեսավարող սուբյեկտներին (լիներեն դրանք առանձին անհատներ, թե կոլեկտիվներ) տալ տնտեսավարման առավելագույն հնարավոր անկախություն: Տնտեսական սուբյեկտների կարգավիճակին վերաբերվող «անկախ» բնորոշումը պատահական չէ և իմաստային տեսակետից խիստ որոշակի է: Մեր կարծիքով դրա փոխարեն տեղին չէր լինի «անջատված» կամ «մասնավոր» կատեգորիաների գործածումը, որոնք հաճախ հանգիստում ենք տնտեսագիտական դրականության մեջ: Ասվածը պարզելու համար պետք է հստակ տարբերակում մտցնել այդ արտահայտությունների մեջ:

«Անջատվածությունը» մենք կապում ենք տնտեսական կյանքի բովանդակության և ոչ թե ձևի հետ: Դա մի բնորոշում է, որ միշտ էլ հատուկ է եղել տնտեսական սուբյեկտներին՝ անկախ նրանց գործունեության հասարակական-տնտեսական ձևից. ընդ որում, բավական լայն հասկացություն է իմաստային ընդգրկման առումով: Մեր մեկնաբանությամբ այն հասարակական օրգանիզմի դիսկրետության և տնտեսական համակարգի օղակների հարաբերական առանձնացվածության արտահայտությունն է, որ առկա է նույնիսկ աշխատանքի հասարակական բնույթի խորացման ժամանակ:

Այս առումով չի կարելի նույնիսկ հասարակական սեփականության պայմաններում առկա տնտեսական սուբյեկտների մասնատվածությունը, որ հաճախ ձևականորեն ինքնուրույնության սահմանում է ստացել և ծառայել որպես ապրանքադրամական հարաբերությունների գործողության անհրաժեշտության տնտեսական հիմնավորում, շփոթել դրանց անկախության հետ: Իսկ այդ հիմքն վրա արտադրության միջոցների հասարակակալուն սեփականության պայմաններում շուկայական հարաբերությունների զարգացման առերեւելթ հնարավորությունը չի կարելի շփոթել շուկայի ընթացք գոյության իրական հիմքերի հետ:

Մինչդեռ անկախությունը հասկապես սուբյեկտի, որպես այդպիսի, բնորոշումն է, որը կարող է ընդունել ինքնուրույն որոշումներ, անսահմանական բաղմամբիվ հնարավոր տարբերակներից ընտրել մեկը, իր տեսակներից՝ լավագույնը: Ընտրության հնարավորությունն էլ, մեր կարծիքով, անկախության դրսևորումն է, դրա իրացման ուղիքը: Այլ խոսքով, շուկան չի բավարարվում արտադրության միջոցների նկատմամբ արտադրողների ձևական հավասարության իրողությամբ: Այն պահանջում է տնտեսական և իրավական առումներով լիիրավ, փաստացի, ազատ սեփականաւաններ:

Խիստ ձևական թվացող այս տեսական հարցը, որ պարզապես վերաբերում է գլխական տերմինների դանադանությանը, իրականում մեծ կարևորություն է ստանում դործնական ճիշտ որոշումների ընդունման համար, երբ այդ հասկացություններն ու համապատասխան երևույթները դառնում են տնտեսական քաղաքականության մշակման բաղկացուցիչ տարրերը:

Լիիրավ սեփականաւանների առկայությունը շուկայական հարաբերությունների դոյության միայն անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայմանն է: Սակայն սա չէ մեր քննարկման հատուկ նպատակը: Պարզապես պետք է ցույց տրվի, որ շուկան որպես հասարակական-տնտեսական երևույթ չի կարող դասվել արտադրահարաբերությունների որևէ հատվածին կամ փուլին: Այն շոշափում է ողջ տնտեսակարգը և իր լիարժեք դոյությամբ պայմանավորված է արաադրահարաբերությունների համակարգի հիմքի՝ սեփականություն, ձևի առանձնահատկություններով: Այսքանից հետո լրացուցիչ հիմնավորման կարիք չի դրում այն դրույթը, որ անցումը շուկայական հարաբերությունների պետք է ուղեկցվի, դեռ ալելին, սկսվի սեփականության ինստիտուտի վերականգնումից, իսկ ալելի որոշակի՝ դրա «դիմադրկվածության» և անորոշության հաղթահարումից:

Ինչպես վերը նշվեց, նույնիսկ արդի պայմաններում որոշ պահանջողական տնտեսագետներ անտեսում են այս անհրաժեշտությունը: Սակայն նրանք փորձում են ինչ-որ կերպ արդարացնել այդ դիրքորոշումը, վկայակոչելով սեփականության ֆունկցիաները՝ տնօրինումը, օգտադործումը, յուրացումը, որոնց շնորհիվ ստեղծվում է կոլեկտիվ արաադրողների առանձնացվածության իրավիճակը: Սակայն սեփականության ֆունկցիաների բաժանումը երբեք էլ չի փոխում արտադրանքի հարաբերությունների էությունը և, որ ամենակարևորն է, սեփականատիրության իրացման բովանդակությունը:

Օրինակ, կապիտալիստական հասարակարդում ձեռնարկության մեկնեցերի թիկունքում է արաադրության միջոցների ոչ թե սոսկ անվաճական, այլ իրական սեփականատերեր (ձեռնարկատերեր, բաժնետիրական ընկերությունը) աշխատանքի արդյունքը յուրացնելու իրավունքով: Եվ այդ սեփականատերերը դեմ հանդիման կանդնած է իր նման անկախ մյուս սեփականատերերի հետ: Մենեջերն ընդամենը նրանց ներկայացուցիչն է: Այլ խոսքով, արտադրության միջոցների սեփականատերերն առքուվաճառքի հարաբերությունների մեջ են մտնում իրենց ներկայացուցիչների միջոցով, ոոն էապես նույն բանն է: Նման տրամաբանությամբ նրանք հարաբերությունների մեջ են մտնում նուս աշխատուժի սեփականատիրոջ հետ:

Մինչդեռ սոցիալիստական հասարակարդում հանրայնացված ձեռնարկության դիրեկտորի թիկունքում պետությունն է, որը դործնականում աիրում է ամեն ինչի: Այստեղ առանձնացված են միայն սեփականատիրոջ ներկայացուցիչները, բայց ոչ թե իրենք՝ սեփականատերերը և դա խիստ էական նշանակություն ունի: Այստեղից հետևում է, որ նույնիսկ դործի աճեցողի կաղմակերպման պայմաններում խորհրդային «մենեջերը» չի կարող իրեն սեփականատեր դղալ բառիս բուն իմաստով: Նրա անձնական շահագրդովածությունը չի կարող այնքան բարձր լինել, որպեսդի հաաուցի տնտեսականաւվողության ամբողջ ծանրությունը, որ կրում է իսկական սեփականատերը կամ նրա անունից հանդես եկող անձը: Այսպիսով, համատեռ սեփականատիրության քրողությունը չպետք է դուրս թողնվի տնտեսագաղաչի:

Սեփականության հարաբերությունների վերակառուցման անհրաժեշտության ընդունումը դեռևս վերջ չի դնում տարածայնություններին, որոնք բխում են անցման ուղիների ընթացքի վերակառուցումից հնարավորություններից ու մեկնաբանություններից: Տվյալ դեպքում տակտիկական բոլոր տարբերությունները պետք է հիմնված լինեն ոչ միայն շուկայական հարաբերությունների անցման անհրաժեշտության, այլ նաև արդիականության խոր տեսական վերլուծության և արտադրողական ուժերի զարգացման ներկայիս սպարդակի օբյեկտիվ գնահատականի վրա:

Այս առումով չի կարելի ընկնել նաև մյուս ծայրահեղության գիրկը՝ այսինքն ընդլին բացառել շուկայական հարաբերությունների և դրանց անցնելու գործընթացի պետական կարգավորման մեծ կարևորությունը: Տնտեսագիտական բաղմամբով հետադուրություններում կոչեր են հնչում ամեն ինչ սկսել ազատ մրցակցության շուկայից, Նույնիսկ խոսվում է սոցիալիզմի ժամանակ «ստվերային» էկոնոմիկայի ներկայացուցիչների կողմից իրենց նացիոնալ «կապիտալի նախասկզբնական կուտակման» և մասնավոր սեփականության հարաբերություններն անցնելու նպատակով այդ երևույթի օրինականացման մասին:

Ազատ մրցակցային շուկան խիստ անհրաժեշտ էր այն ժամանակաշրջանում, երբ մեր երկիրն ապրում էր անցումային ծանր փուլը: Դրա հետևիտղական զարգացումը կարող էր տնտեսական հարաբերությունների ծավալումն ազատել հետագա ախալներից ու կորուստներից, որ իրենց հետ բերեցին ռևի, օբյեկտիվորեն չնախապատրաստված համայնականացումը և տնտեսավարման մյուս վաղահաս ձևերի փրառումը: Սակայն պետք է հաշվի առնել, որ այսպես թե այնպես մենք այլևս այդ ժամանակաշրջանում չենք: Հասարակական հարաբերությունները դրա համար հասունացել են: Իսկ համակարգի հասունության աստիճանը և տնտեսական անմիջիթար իրավիճակը միանգամայն տարբեր բաներ են: Այնպես, որ արտադրության հանրայնացման առկա մտկարգակի պայմաններում այլևս անհնար է զեկավարվել անցյալի ղեղադրամներով:

Ուստի սեփականաշնորհման էությունը չպետք է կապել բացառապես մասնավոր սեփականության հարաբերությունների հաստատման հետ: Դա տնտեսական սուբյեկտների վերահիշյալ անկախության առանձին դրսևորումն է միայն: Իսկ լայն առումով սեփականաշնորհումը պետք է ներդրավի արտադրության միջոցների և արդյունքների նկատմամբ սեփականության բոլոր տիպերն ու ձևերը՝ ընդհուպ մինչև պետական սեփականության պահպանումը, որը ոչ միայն անխուսափելի է, այլև անհրաժեշտ: Այդ միջոցառման վերջնական նպատակը պետք է լինի էկոնոմիկայի պետական մենաշնորհի կազմավորումը և տնտեսական սուբյեկտների ինքնուրույնության գործնական ապահովումը, որը հնարավոր է միայն դրանք սեփականության իրական սուբյեկտների վերածելու պայմանով:

Էկոնոմիկայի վերակառուցման ամենամեծ հավանության արժանացած տեսակետն այդպիսին էլ է: Այն հիմնվում է սեփականության բոլոր ձևերի «իրավահավասարության»: Ուրեմն մեծելով սոցիալիզմի կամ այլ հասարակարգի տնտեսական հիմք ստեղծելու, որոնք սեփականություն որևէ որոշակի ձևի նախապատվություն տալու «բազալարախոսական» մոտեցումը: Սակայն այս ուղղությամբ գործնական առաջարկությունները, որոնք հիմնվում են անհատական մոտեցումների և հաշվարկների վրա, խիստ տարբերվում են: Օրինակ, Գ. Պոպովը դառնում է, որ պետական սեփականությունը պետք է կրճատել մինչև 50 %, Ֆ. Բուռլացկին այդ սահմանն իջցնում է 1/3-ի, իսկ Պ. Բուրիլը հանդես է գալիս վերածակվման ճանապարհով պետական ձեռնարկությունները հետզհետե մասնավորի և կոոպերատիվի վերածելու առաջարկով և այլն³:

³ Альтернатива: выбор пути. М., 1990, с. 146; Экономика и жизнь, 1990, № 37, с. 9—10.

Կարծում ենք, որ ժողովրդական տնտեսության ահռելի մասշտաբները երկրում համատարած սեփականաշնորհման աննախադեպությունը, ինչպես նաև հանրապետությունների կտրվածքով այդ քաղաքականության որոշակիացման անհրաժեշտությունը բացառում են խիստ ժամկետների, սեփականաշնորհման առկայությունն առաջադրանքների նախօրոք սահմանման հնարավորությունը, մերժում անհարկի շտապողականությունը: Բացի այդ պետք է նկատի ունենալ նաև, որ սեփականաշնորհման քաղաքականությունը պետք է վարել համաձայն շուկայային հարաբերությունների արամբանության օրենքների: Այս առումով միտյն սեփականության տարրեր ձևերի մրցակցությունը և քաղաքացիներին դրանց ընտրության հնարավորության պարտադիր ընձեռումը կարող են պարզել, թե ձեռնարկություններն ի՞նչ հիմունքներով է առավել նպատակահարմար ու արդյունավետ սեփականացնելու:

ПЕРЕСТРОЙКА ОТНОШЕНИЙ СОБСТВЕННОСТИ В УСЛОВИЯХ ПЕРЕХОДА К РЫНОЧНОЙ ЭКОНОМИКЕ

Г. Г. АРУТЮНЯН

Р е з ю м е

Кризис социалистической экономики и задачи его преодоления однозначно выдвинули на первый план переход к свободно развивающейся рыночной экономике, горизонтальным взаимоотношениям экономически и юридически равноправных субъектов хозяйствования. Однако такой переход неосуществим на базе, общественной собственности, безликой, неопределенной, парализующей деловую инициативу людей. Надо создать реальные основы независимости экономических субъектов. Это возможно только путем разгосударствления и приватизации собственности. В то же время степень развития производительных сил и зрелость экономической системы диктуют необходимость равноправного сосуществования разных форм собственности, в т. ч. немалой доли государственной, что отрицает сведение существа проводимой экономической политики лишь к созданию частной собственности.